338.4(47)
Я-38

1073

17 FEB 2010

ԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

# ՆԱՎԹԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

338.4(47)
Ն-38

ՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՆԻՍՏ"-Ի
ԲԱՔՈՒ—1934 Թ.

02.07.2013
Ա-38
31.382

Հայերեն թարգմանությունը խմբագրեց
Ա. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

5003-91
3442-5

Тип. „III Интернационал"
Главлит № 4544
Заказ № 2388
Тираж. 4000
Сдано в произв. 20-го мая
Разрешено к печати 12-го июн
Тип знаков 78400

338.4(47)
Ա-38

## ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

# ԱԶՆԵՎԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

«Նրանից հետո, յերբ տված է ճիշտ գիծը, յերբ տված է հարցի ճիշտ լուծումը, գործի հաջողությունը կախված է կազմակերպչական աշխատանքից, կուսակցության գիծը կյանքում կիրառելու պայքարը կազմակերպելուց, մարդկանց ճիշտ ընտրությունից, վերադաս մարմինների վորոշումների կատարման ստուգումից: Առանց դրան կուսակցությունն ուղիղ գիծը և ճիշտ վորոշումը կարող է լուրջ վնաս կրել»:

**ՍՏԱԼԻՆ**

*Համկոմկուսի (բ) Կենտկոմը քննության է առել Ադրբեջանի նավթարդյունաբերության աշխատանքի հարցը: Ընդունած վորոշման մեջ կուսակցության Կենտկոմը մատնանշում է, վոր Ազնեֆթն ու Բաքվի կուսկազմակերպությունը զգալի հաջողություններ են ձեռք բերել նավթարդյունաբերության տեխնիկական զինվածության բարձրացման, մասնագետների յերիտասարդ կադրերի ղեկավար աշխատանքի առաջ քաշելու և բանվորներին ու ինժեներա - տեխնիկական աշխատողներին նավթի համար մղվող*

3124
1073

պայքարի շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու հանգամանքով, վորոնք իրականացվեցին Ադնեֆթի նախկին միացությունն ապախոշորացնելու մասին Կենտկոմի վորոշման հիման վրա: Այդ մասին վկայում է նավթահանության աճը. 1934 թ. 4 ամսվա ընթացքում 46,5 տոկոսով ավելի նավթ է հանված, քան անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանում: Հորատման ասպարեզում այս տարվա առաջին յեռամսյակի հանրագումարները գերազանցում են անցյալ տարվանից 67,5 տոկոսով:

Կենտկոմի վորոշումը միաժամանակ նշում է, վոր այդ նվաճումների հետ միասին Ադնեֆթը չի կատարում պլանը՝ մնալով 1933 թվի չորրորդ յեռամսյակի նավթահանության մակարդակի վրա: 1934 թվի չորս ամսվա ընթացքում նավթահանության պլանը կատարվել է 86,8 տոկոսով: Յերկրին 922 հազար տոնն նավթ պակաս է տրվել:

Նավթահանության պլանի թերակատարումը ամենից առաջ պայմանավորված է հորատման վատ աշխատանքով:

Հանձնախմբի ավարիաները, մասսայական պարապուրդներն ու փլումները հասցրել են այն բանին, վոր առաջին յեռամսյակում պլանի 258 նոր նավթահորերի փոխարեն ավարտված է 180-ը, իսկ շահագործման է դրվել միայն 150-ը: Բավարար չափով չի օգտագործվում նավթահորերի յեղած ֆոնդը և շահագործական



սարքավորումը: Դեռ անբավարար են աշխատանքի վորակական ցուցանիշները՝ ինքնարժեքը, նավթի կեղտոտությունը, գազի օգտագործումը և այլն: Այս բոլոր թերությունները բացատրվում են գլխավորապես նրանով, վոր Գլխնավթի ու Ադնեֆթի միացության ապախոշորացումը ձգձգելու հետ միասին չեն դրել և չեն լուծել կառավարման ամբողջ սիստեմի արմատական վերակառուցման խնդիրները՝ սկսած տրեստից մինչև նավթահորը ներառյալ: Կենտկոմը հավանություն է տվել Ադնեֆթի վերակառուցման մասին Անդրյերկոմի 1934 թվի ապրիլի 10-ի վորոշմանը և պարտավորեցրել է Գլխնավթին ու Ադնեֆթին՝ ավարտել ամբողջ վերակառուցումը հունիսի 1-ից վոչ ուշ:

Նավթահանության ծրագրի (22 միլիոն տոնն նավթ և գազ) անպայման կատարումն ապահովելու նպատակով, այլև ընթացիկ նավագնացության ժամանակ ջրային ճանապարհներով ամենամեծ չափով նավթ փոխադրելու գործըն ապահովելու համար, առաջարկված է Ադնեֆթին մայիսի 1-ից մինչև նավագնացության վերջը հանել վոչ պակաս 12·200·000 տոնն նավթ և 600 հազար տոնն գազ:

Ըստ ամիսների՝ նավթահանությունը պետք է կատարվի այսպես. մայիս 1·829·000 տոնն, հունիս 1·792·000 տոնն, հուլիս 1·830·000 տոնն, տոնն, հոկտեմբեր 1·922·000 տոնն, օգոստոս 1·891·000 տոնն, սեպտեմբեր 1· 869·000 տոնն;

նոյեմբեր 1·860·000 տոնն, դեկտեմբեր 1·693·000 տոնն։

Յերկրորդ յեռամսյակում պետք է ավարտվի վոչ պակաս 230 նոր նավթահորի, յերրորդ յեռամսյակում վոչ պակաս — 200 նավթահորի փորելը՝ ժամանակին դրանք շահագործման մեջ դնելով։

Նավթահորերի ունեցած ֆոնդը պետք է պատշաճ կարգի բերվի։ Անհրաժեշտ է ապահովել նրա շահագործման ճիշտ ռեժիմը։ Անհրաժեշտ է նաև լրիվ և ճիշտ կերպով ոգտագործել ունեցած կոմպրեսորների պարկը և ապահովել դրանց արտադրողականությունը բարձրացնող տեխնիկական միջոցառումների սիստեմը։ Անհրաժեշտ է պայքար մղել նավթի և ջրի խառնվելու ու կեղտոտվելու դեմ։

Կենտկոմը մատնանշում է հորափորման արագության անթույլատրելի կերպով հետ մնալն ամերիկական ժամանակակից արագություններից։ Դա հետևանք է այն բանի, վոր բավականաչափ չեն տիրապետել հորափորման տեխնիկային և գլխավորապես հետևանք է այն բանի, վոր խորհրդային գործարաններում բացակայում է ժամանակակից բարձրորակ սարքավորման արտադրությունը։ Նավթարդյունաբերության աշխատողները դեռևս կողմնորոշվում են դեպի չափող պրիբորների, խողովակների և սարքավորման ներմուծումը և ամբողջ վճռականությամբ խորհրդային մեքենաշինարարության առաջ չեն դնում նավթարդյունաբերության համար բոլոր անհրաժեշտ սարքավորումների արտադրման պահանջը։



Ծանր արդյունաբերության ժողկոմատին առաջարկված է յերկու ամսվա ընթացքում մշակել միջոցառումների այն սիստեմը, վորն անհրաժեշտ է ԽՍՀՄ ձեռնարկություններում նոր տիպերի սարքավորման (պրեվենտերներ, չափող ստուգող պրիբորներ, ֆասոնային դուրեր, ուժեղ ցեխհան նասոսներ, հատուկ մարկաների հորափորական և հորերի ամրացման խողովակներ, ուժեղ կոմպրեսորներ և այլն) մասսայական արտադրությունը յուրացնելու համար, այլ և միջոցառումներ նշել նավթային հատուկ սարքավորումների բազան ընդլայնելու համար։

Հանվող նավթի մշակումն ապահովելու և լուսեղ նավթամթերքներ ստանալու չափը բարձրացնելու նպատակով առաջարկված է «Ազնեֆթեզավոդ» տրեստին (կառավարիչ ընկ. Սյուզկին) մինչև 1935 թվի ապրիլի 1-ն ավարտել 5 մթնոլորտային տրուբչատկաների կառուցումը, մինչև 1935 թվի մարտի 1-ը յերկու կրեկինգի կառուցումը, յուղազտիչ գործարանների յերրորդ և չորրորդ սեկցիաները մինչև 1934 թվի ոգոստոսի 15-ը։

Նավթից գոլորշիացող թեթև նյութերը մաքսիմալ չափով ապահովելու նպատակով առաջարկված է հերմետիկ դարձնել այն նավթահորերը, վորոնք թեթև նավթ են տալիս, առաջին

հերթին Կալայում և Լոկ-Բատանում, այդ շրջաններում նավթահորերի հերմետիկ դարձնելու գործն ավարտելով 1934 թվի ընթացքում։ 1934 թվի ընթացքում բոլոր կրեկինգ-գործարաններում պետք է գազհավաքիչներ սարքավորել։

Ծանր արդյունաբերության ժողկոմատն արդեն այս տարի (յերրորդ և չորրորդ յեռամսյակներում) պարտավոր է կարգավորել նավթաթոր գործարաններին անհրաժեշտ այն սարքավորումների և նյութերի արտադրությունը, վորոնք մինչեվ այժմ ներմուծվում են արտասահմանից։

Վորոշման մեջ մատնանշվում է, վոր անմիջապես նավթահանքերում բավականաչափ չի ծավալված կուլտ-մասսայական աշխատանքը։

Կենտկոմը պարտավորեցրել է Անդրյերկոմին, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բաղկոմին՝ ծավալել կուլտ-մասսայական աշխատանքը բանվորների և ինժիներա-տեխնիկական աշխատողների մեջ նավթահանության պլանն անպայման կատարելու և նախագծված վերակառուցումն արագորեն ավարտելու հարցերի շուրջը, միաժամանակ ամենավճռական պայքար մղելով հետամնաց տրամադրությունների և վերակառուցմանը դիմադրելու դեմ։

Կենտկոմն իր համոզմունքն է հայտնում, ատվում է վորոշման մեջ, վոր Բաքվի և Անդրըր կոմկուսի բոլշևիկները, անցյալ տարվա որինակով, լիովին կկատարեն նավթահանման նախա-



տեսնված ծրագիրը և ամենակարճ ժամանակում կլրացնեն ընթացիկ տարվա առաջին ամիսների պակասը։

Կենտկոմը հաստատել է ընկ. Որջոնիկիձեյի հրամանը նավթարդյունաբերության յերկրորդ և յերրորդ յեռամսյակների նյութական-տեխնիկական մատակարարման մասին։

Արտադրական ծրագիրն ու նոր շրջանների յուրացման ծրագիրը Ազնեֆթի և Ադրնավթհետախուզության կողմից կատարելու գործն ապահովելու համար, առաջարկված է Ծանր արդյունաբերության ժողկոմատի համապատասխան գլխավարչություններին ու տրեստներին՝ Ազնեֆթին և Ադրնեֆթհետախուզությանը՝ հատկացրած ռեսուրսներից բացի, հատկացնել նաև գլանած մետաղի, գազային խողովակների և նեղգիծ ռելսերի լրացուցիչ ֆոնդեր այն քանակությամբ, վոր նշված է Ծանր արդյունաբերության ժողկոմի այս տարվա մայիսի 11-ի հրամանի մեջ։ Միաժամանակ Ազնեֆթին հատկացվում է 2500 տոնն հրակայուն շամոտային աղյուս, 270 տոնն կարբիտ, այլև անհրաժեշտ քանակությամբ ռետինե փոկեր, ավտոշիններ, կանեփյա թոկ և այլն։

Գլավներգպրոմին առաջարկված է Ազնեֆթի և Ադրնավթհետախուզության համար լիովին ապահովել պահանջվող ուժի և տիպի նասոսներն ու կոմպրեսորները էլեկտրոմոտորներով։

Ազնեվթի և Ազրնեվթհետախուզության համար առանձնացված լրացուցիչ սարքավորումներն ու նյութերը մատակարարելու բոլոր պայմանագրերը պետք է կնքվեն տասն օրվա ընթացքում:

Ճանապ․ Հաղորդակց․ Ժողկոմատն ու Ծանրը արդյունաբերության ժողկոմատը պարտավոր են ապահովել հատկացրած ֆոնդերի ժամանակին բեռնելը և ուղարկելը՝ փոխադրումների նախատեսնված պլանների սահմաններում:



# ԱԶՆԵՎԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Անդրյերկոմը գտնում է, վոր Ադրբեջանի նավթային արդյունաբերության աշխատանքի հսկայական չափերով աճած ծավալը (1934 թվին հանել 21 միլիոն տոնն նավթ և մեկ միլիոն տոնն գազ) և արտադրության ղեկավարման բարդացած խնդիրները, պահանջում են Ազնեվթի աշխատանքի վերակառուցումը: Հանքերի և դրուպաների գոյություն ունեցող կառուցվածքը, աշխատանքի սիստեմն ու մեթոդներն ստեղծում են դիմազրկության և աշխատանքի անպատասխանատվության պայմաններ՝ իրենց հանձնված գործի նկատմամբ: Հիմնական արտադրական ստորին ողակները, շահագործման և հորափորման գրուպաները զրկված են իրավունքներից, ինքնուրույնությունից և անհրաժեշտ նյութական բազայից:

Անդրյերկոմը գտնում է, վոր նավթահանության 1934 թվի առաջին յեռամսյակի պլանի թերակատարումը ամենից առաջ հետևանք է արտադրության ղեկավարության այդ վատ կազ–

մակերպման, հանքերում աշխատկարգապահության թուլությանը, կուսակցական աշխատանքի և տեխնիկային տիրապետելու աշխատանքի անբավարար դրվածքի:

Ավարիաների մեծ քանակությունը, հատկապես հորափորման մեջ, պարապուրդի մեջ գտընվող հորերի մեծ քանակությունը և նրանց շահագործման մեջ մտցնելու դանդաղությունը, նավթահանման ժամանակ նավթի կորուստն ու նավթամղումը հանքային տերիտորիաներում, կոմպրեսորների վոչ ռացիոնալ ոգտագործումը, հանդիսանում են արտադրության մեջ գոյություն ունեցող թափթփվածության, սարքավորումների հետ անխնամ վերաբերվելու և արտադրությանը անբավարար տնտեսա — տեխնիկական ղեկավարության ցուցանիշները:

Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարի վորոշումների հիման վրա, Ադրբեջանի նավթային արդյունաբերության ղեկավարության գործում յեղած կազմակերպչական թերությունները վերացնելու, նրա աշխատանքն արմատապես բարելավելու, առաջավոր տեխնիկան արմատացնելու, միանձնավարությունն ամրապնդելու և պրոլետարական գիտակցական կարգապահություն սահմանելու նպատակով, Համկոմկուսի (բ) Անդրյերկոմն անհրաժեշտ է համարում անցկացնել Ազնեվթի որգանների հետեվյալ վերակառուցումը:



# I

## ԱԶՆԵՎԹԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՄԱՍԻՆ

1. Հաստատել Ազնեվթի կենտրոնական ապարատի հետեվյալ կառուցվածքը.

ա. Կառավարիչ.

բ. Կառավարիչի տեղակալներ.

գ. Պլանային — ֆինանսական բաժին.

դ. Հաշվապահություն.

յե. Արտադրա — տեխնիկական բաժին.

զ. Յերկրաբանական բաժին.

է. Քարտուղարություն (հատուկ մասերի և կապի ճյուղերով):

Ազնեվթի կենտրոնական ապարատում վերացնել կադրերի բաժինը, առանձնացնելով անմիջապես Ազնեվթի կառավարիչին կից կադրերի գծով գրուպա: Վերացնել տրանսպորտի բաժինը, արտադրա — տեխնիկական բաժնին կից առանձնացնելով 2–3 հրահանգիչներ տրանսպորտի գըծով:

Վերակառուցման կապակցությամբ Ազնեվթի ապարատի հաստիքները կրճատել 15 տոկոսով և կենտրոնական ապարատում աշխատող մասնագետների 15 տոկոսից վոչ պակաս տեղափոխել անմիջապես հանքում արտադրության մեջ աշխատելու համար:

2. Պահել Ազնեվթին կից յեղած հետեվյալ կազմակերպությունները ու հիմնարկները:

ա. Բանմատվարչություն.
բ. Տեխմատվարչություն.
գ. Ելեքտրոտրեստ.
դ. ՈՒ. Պ. Դ.
յե. Կ. Շ. Դ.
զ. Արտբնակչին.
է. Ազնեֆթի պրոյեկտ.
ը. Պերեկինսի լիցման գրասենյակը:

Հանձնարարել Ազրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բաղկոմին, Ազնեֆթի կառավարչի հետ միասին մի ամսվա ժամկետում վերանայել կազմակերպությունների ապարատների կառուցվածքը, սիստեմն ու աշխատանքի մեթոդները, կրճատել նրանց հաստիքները վոչ պակաս քան 15 տոկոսով և այդ կազմակերպությունների գրասենյակներում աշխատող մասնագետներից 20 տոկոսից վոչ պակաս տեղափոխել անմիջապես արտադրության մեջ աշխատելու համար:

3. Մեքենաշինարարական գործարանների ղեկավարությունը բարելավելու նպատակով վերացնել գործարանների և Ազնեֆթի մեջ գոյություն ունեցող միջանկյալ օղակը՝ Ազնեֆթեբուրմաշը՝ հանձնարարելով նավթային մեքենաշինարարական գործարանների ղեկավարությունը (Շմիդտի, Ռիկովի, Ձերժինսկու անվան յեվ Ա. Ռ. Զ.) անմիջապես Ազնեֆթի կառավարչի վրա, նրան կից ստեղծելով մեքենաշինարարական գծով արտադրա – տեխնիկական գրուպա, կառավարչի տեղակալներից մեկի գլխավորությամբ: Ազնեֆթեբուրմաշի ապարատում աշխատող մասնագետներին տեղափոխել անմիջապես գործարաններում աշխատելու:



4. Շինարարական վարչության և Ազնեֆթի կենտրոնական վարչության նախագծային բյուրոները միացնել, վորպես միասնական նախագծային կազմակերպություն — Ազնեֆթեպրոյեկտ, վորը գոյություն է ունենալու տնտեսհաշվի հիման վրա:

Նախագծային կազմակերպությունների միացման հետեվանքով այդ կազմակերպություններում աշխատող մասնագետների 20 տոկոսից վոչ պակաս փոխադրել հանքերն ու գործարանները՝ ուժեղացնելու համար հանքերի և գործարանների տեխբյուրոներն և կոնստրուկտիվ բյուրոները:

5. Վերակառուցել Ազնեֆթի տեխմատակարարման աշխատանքները:

Տեխմատբաժնի վրա դնել՝ նախագծված սարքավորումների բերումը, և պլանից դուրս ապակենտրոնացված կարգով անհրաժեշտ նյութեղենների ու սարքավորումների գնումը, Ազնեֆթի կառավարչի կարգադրության համաձայն նյութեղեններն ու սարքավորումները հանքերին

բաշխելը, նյութեղենների ու սարքավորումների տրանզիտի կազմակերպումը, տեղափոխությունը, սարքավորումների ու նյութեղենների ու նրանց օգտագործման հաշվառքը:

Ադնեֆթի ուտիլիզացիոն բաժինը և լայնորպառ գրասենյակը հանձնել տեխ – մատակարարությանը: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բագկոմին և Ադնեֆթին ստուգել ուտիլիզացիոն բաժնի աշխատանքը:

Պարտավորեցնել Տեխմատին պարբերաբար հավաքել հանքերի դիրեկտորներին, տեխնիկական մատակարարման գործում յեղած թերությունները պարզելու և վերացնելու նպատակով:

6. Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բագկոմին, ստուգել Տեխմատի շրջանային պահեստների դրությունը, իսկ կուսակցության շրջկոմներին՝ իրենց աշխատանքում մեծ ուշադրություն դարձնել Տեխմատի շրջանային պահեստների և հանքերի տեխնիկական մատակարարման հարցերին:

Վորպես փորձ՝ Ստալինյան շրջանում Տեխմատն առանձնացնել Տեխմատի սիստեմից, վերակառուցել այն, վորպես շրջանային Տեխմատ, վորը պետք է գտնվի Ստալինյան հանքի դիրեկցիայի ղեկավարության տակ: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բագկոմին և Ադնեֆթին այս ձեռնարկումը հսկողության տակ առնել:



II

## ՀԱՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հաստատել հանքերի կառավարման հետևյալ որինակելի կառուցվածքը:

ա. Դիրեկտոր.
բ. Դիրեկտորի տեղակալ — հորափորման գլխ. ինժիներ.
գ. Դիրեկտորի տեղակալ — շահագործման գլխ. ինժիներ.
դ. Դիրեկտորի ոգնական ոժանդակ ձեռնարկների գծով.
յե. Պլանային – Ֆինանսական բաժին.
զ. Հաշվապահություն.
է. Յերկրաբանական բյուրո.
ը. Տեխբյուրո.
թ. Բանվորաբաժին.
ժ. Գործերի վարչություն:

Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բագկոմին ու Ադնեֆթի կառավարիչ ընկ. Պետերսոնին մի տասնորյակի ընթացքում մշակել, ներկայացնել Անդրյերկոմին ի հաստատություն Ադնեֆթի յուրաքանչյուր հանքի մշակված կառուցվածքը և հաստիքները առանձին – առանձին:

Հանքային վարչություններում վերացնել կադրերի սեկտորը, հանքի դիրեկտորին կից թողնելով 1–2 աշխատակից կադրերի գծով: Վերացնել

ՏՆԲ, հանքի դիրեկտորին կից թողնելով 3-4 աշխատող՝ աշխատանքի տարիֆիկացիայի - չափավորման գծով:

Կրճատել հանքային վարչությունների հաստիքները, ոչ պակաս 20 տոկոսով և հանքային վարչություններից ու հորափորման ցեխերից աշխատանքից ազատվող մասնագետներին տեղափոխել գրուպաները, արտադրության մեջ:

2. Հորափորման և շահագործման գրուպաներին սպասարկելու համար պահել հետևյալ ընդհանուր հանքային օժանդակ կազմակերպությունները ու ձեռնարկները, որոնք գտնվում են հանքային վարչության անմիջական ղեկավարության տակ:

ա. Հորափորման և շահագործման արհեստանոցներ.

բ. Շինարարական գրասենյակը.

գ. Տրանսպորտային գրասենյակը.

դ. Ճանապարհային գրասենյակը.

յե. Կոմունալ գրասենյակը.

զ. Երկրորդ բաժին (դրա հետ և հեռախոս. ցանցը).

է. Բան. կրթության կաբինետ (Փարգործուս, բանվորական կրթության մասսայական ձևեր և այլն).

ը. Կոմպրեսորային և գազային տնտեսություն.

թ. Կավալուծույթի գործարան.



ժ. Իզոլյացիայի և փորող գրուպա.

Առաջարկել կուսակցության շրջանային կոմիտեներին, հանքերի վարչությունների հետ միասին վերանայել այդ կազմակերպությունների կառուցվածքը, նրանց աշխատանքի սիստեմն ու մեթոդները և միջոցներ ձեռք առնել աշխատանքը բարելավելու համար:

3. Հանքերում վերացնել հորափորման ցեխը, հորափորման ղեկավարությունը հանձնելով հանքի դիրեկտորի տեղակալին՝ հորափորման գլխավոր ինժիներին:

Վերացնել մոնտաժային բաժինը, փորող ստանոկների հավաքումը, ցրումն ու փորող ստանոկների մոնտաժը դնել հորափորման գրուպայի վրա:

Վերակառուցել իզոլյացիոն գրուպաների աշխատանքները, իզոլյացիոն գրուպայի վրա դնելով միայն բարդ նորոգման, (բարդ վթարման, ներքին և վերին շերտերի ջրերի իզոլյացիայի աշխատանքները և խողովակների ծակերը): Հորերում ընթացիկ նորոգման աշխատանքների պատասխանատվությունը դնել շահագործման գրուպայի վրա: Հանձնարարել Ադնեֆթին և շրջկոմներին ստուգել հանքերում իզոլյացիոն գրուպաների աշխատանքը և միջոցներ ձեռք առնել նրանց աշխատանքների կազմակերպումը բարելավելու համար:

III

## ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՐՈՒՊԱՅԻ ՄԱՍԻՆ

1. Շահագործման գրուպան պիտի հանդիսանա հանքի հիմնական ստորին արտադրական օղակը: Շահագործման գրուպան պետք է կառուցվի արտադրական–տերիտորիալ սկզբունքներով: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բաղկոմին և Ազնեֆթին, հանքերի դիրեկտորների հետ միասին, տասնօրյա ժամկետում ստուգել շահագործման գրուպաների տերիտորիալ դասավորումը և նրանց ընդգրկող նավթահորերի քանակը, ու նրանց համապատասխան դարձնել՝ գրուպայի կողմից յուրաքանչյուր նավթահոր տնտեսական–տեխնիկական ղեկավարությամբ լավագույն կերպով ընդգրկելու հնարավորությունը և գրուպայի համար անհրաժեշտ նյութական–տեխնիկական բազա ստեղծելուն:

2. Շահագործման գրուպան ամրապնդելու և նավթահանման համար նրա պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով՝

ա) Այնպիսի կարգ սահմանել, վոր հորափորման կետեր վորոշելը և շահագործման այս կամ այն գրուպայի տերիտորիայում նավթահորեր փորելու նախագծերի մշակումը կատարի նավթահանքի դիրեկտորը՝ երկրաբանական բյուրոյի և շահագործման գրուպայի վարիչի հետ միասին:



բ) Շահագործման գրուպային տալ տնտեսա–տեխնիկական վերհսկողության իրավունք՝ ծրագրի կատարման և հորափորման վորակի, այն հորերի ամրացման և ծակելու նկատմամբ, վորոնք պիտի հանձնվեն շահագործման այդ գրուպային: Այդ նպատակով շահագործման գրուպաների տերիտորիայում այս կամ այն նավթահորի փորման աշխատանքները կատարում են շահագործման գրուպայի և հորափորման գրուպայի միջև կնքված պայմանագրի համաձայն և յուրաքանչյուր հորի փորման քանակական ու վորակական ցուցանիշների համար հորափորման գրուպայի ֆինանսավորումը կատարվում է շահագործման գրուպայի միջոցով:

գ) Շահագործման գրուպայի լիակատար տնօրինությանը հանձնել գրուպայի նավթահորերի ամբողջ սարքավորումը և մեխանիզմը, (նասոսների խմբակը, կաչալկաները, մոտորները, ելեքտրոսարքավորումը, նասոսային սարքավորումները և այլն):

դ) Շահագործման գրուպային հանձնարարել իր գրուպայի հորերի բոլոր ավարիական և պլանային.– կանխիչ նորոգման աշխատանքները՝ բացի բարդ նորոգման աշխատանքներից, վոր պիտի կատարեն իզոլյացիայի գրուպաները: Դրա համար տալ շահագործման գրուպաներին նորոգման անհրաժեշտ ինվենտար և շահագործման գրուպաներում ուժեղացնել նորոգող բրիգադների կազմը:

դ) Շահագործման յուրաքանչյուր գրուպա պետք է ունենա յուր պահեստները և նավթամղման բոլոր գծերը՝ նավթահորերից սկսած մինչեվ պահեստներն ու նստոսային տնտեսությունը գտնվում են նրանց լիակատար տնօրինության և պատասխանատվության տակ:

զ) Շահագործման գրուպաներին պատկանող ամբողջ ավտո և սայլային տրանսպորտը, տրակտորներն ու ամբարձակները հաստատապես ամրացնել գրուպաներին, նավթահանքի տրանսպորտային գրասենյակին տալով տեխնիկական հսկողության և տրանսպորտի պլանային կանխիչ նորոգման յենթարկելու իրավունքը:

Շահագործման գրուպաներին հանձնել բոլոր միջոցները, վոր հատկացվում են տրանսպորտի ու ամբարձակների պահելուն, շահագործմանը և նորոգմանը:

ե) Ելեկտրահաղորդման բոլոր գծերը՝ սկըսած բաշխիչ տնակներից մինչև նավթահորերն ու գրուպայի ներսի փորվող հորերը և ելեկտրաբաժնի մանտյորային բրիգադները հանձնել շահագործման գրուպաների լիակատար տնօրինությանը: Հանքային վարչության կից թողնել միայն 2–3 ինժիներ և ելեկտրոնորոգման արհեստանոցները, ելեկտրոհաղորդման ընդհանուր նավթահանքային գծերն սպասարկելու, ելեկտրատնտեսությունը վարելու տեսակետից գրուպաներին վերահսկելու և ելեկտրատնտեսության հիմնական նորոգումը կատարելու համար:



ը) Լիովին հանձնել շահագործման գրուպաների տնօրինությանը մատակարարման հարթակները (պահեստները), վորոնք պետք է ունենան գրուպաների համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների համար անհրաժեշտ պաշարներ:

թ) Շահագործման յուրաքանչյուր գրուպա ունի իր մեքենական արհեստանոցը՝ շահագործվող հորերի ընթացիկ մանր նորոգման և մոնտաժային աշխատանքները կատարելու համար:

ժ) Կոմպրեսորային և գազային տնտեսությունները մնում են կենտրոնացված նավթահանքային կազմակերպություն և պայմանագրի համաձայն ապահովում են շահագործման գրուպաներին օդ և գազ տալը:

ժա) Շահագործման գրուպաների տերիտորիայում բոլոր կառուցողական աշխատանքները (բացի ընդհանուր նավթահանքային շինություններից) կատարում է կառուցողական գրասենյակը՝ շահագործման գրուպայի հետ կնքված պայմանագրերի համաձայն, նրա վերահսկողությամբ և ֆինանսավորվում է նրա միջոցով տնտեսական հաշվառքի հիման վրա:

ժբ) Շահագործման յուրաքանչյուր գրուպային ամրացնել հանրակացարանների ու բնակարանների ֆոնդ, վորը բաշխվում է գրուպայի վարիչի կարգադրությամբ: Գրուպաներին ամրացված հանրակացարանների և բնակարանների նորոգման ու կոմունալ սպասարկման գործը թողնել նավթահանքի կոմունալ բաժնին:

ժգ) Շահագործման գրուպաները փոխանցել տնտեսհաշվարկի ու դրա կապակցությամբ շահագործման գրուպայի ֆինանսավորման համար այնպիսի կարգ սահմանել, ըստ որի շահագործման գրուպան միջոցներ է ստանում ուղղակի կերպով ըստ նավթահանման պլանի կատարման: Արդֆինպլանի կատարման համապատասխան՝ շահագործման գրուպայի ստացած բոլոր միջոցները դրվում են գրուպայի տրամադրության տակ և ծախսվում նրա հայեցողությամբ՝ հաստատված արդֆինպլանի համաձայն: Այն միջոցները, որ շահագործման գրուպան ստանում է հատուկ սահմանված կարգով պլանի գերակատարման համար, լրիվին դրվում են գրուպայի վարիչի տրամադրության տակ, և ծախսվում են նրա հայեցողությամբ:

Հաստատել շահագործման գրուպայի հետևյալ օրինակելի կառուցվածքը.

ա. Գրուպայի վարիչ.

բ. Գրուպայի վարիչի տեղակալ.

գ. Երկու հերթափոխ օգնական.

դ. Կոմպրեսորային շահագործման ինժիներ՝ իր գիշերային օգնականներով և բանվորական բրիգադներով.

յե. Նասոսային շահագործման ինժիներ (իր օգնականներով և բանվորական բրիգադներով).

զ. Սարքավորումների ինժիներ (իր օգնականներով և բանվորական բրիգադներով).

է. Իզոլյացիոն – նորոգման բրիգադներ.

ը. Ելեքտրամեխանիկական բրիգադ.



թ. Մեխանիկական արհեստանոց.

ժ. Տեխնիկական մատակարարման հարթակ (պահեստ).

ժա. Տրանսպորտ.

ժբ. Պլանային – ֆինանսական, հաշվառքային և տեխնիկական տրանսպորտ (7—10 հոգի):

Լիկվիդացիայի ենթարկել այսպես կոչված մինջային և տեղամասային ինժեներներին՝ որպես անպետք և ավելորդ օղակ՝ շահագործման գրուպաների և նավթահորերի միջեվ: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բադկոմին և Ազնեֆթին, նավթահանքերի դիրեկտորների ու կուսակցության շրջկոմների հետ միասին, շահագործման յուրաքանչյուր գրուպայի ծավալի և բնույթի համեմատ, յուրաքանչյուր նավթահորում առանձին – առանձին սահմանել շահագործման յուրաքանչյուր գրուպայի ճշգրիտ կառուցվածքը և շտատները: Հանձնարարել Ազնեֆթին, նավթահանքերի դիրեկտորների և կուսակցության շրջկոմների հետ միասին, վերանայել գրուպաների վարիչների, գրուպաների նասոսային և կոմպրեսորային շահագործման ինժեներների կազմը՝ նրանց կազմը որակյալ աշխատողներով ամրացնելու նպատակով:

## IV

## ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ԳՐՈՒՊԱՅԻ ՄԱՍԻՆ

1. Հորափորման գրուպաների կողմից յուրաքանչյուր նավթահորերի դրությունը բարելավելու նպատակով՝ որպես կանոն սահմանել,

վոր հորափորման գրուպան ընդգրկում է 20 հոգուց վոչ ավելի։ Ազնեվթը դրա համապատասխան մի ամսյա ժամկետում պիտի վերանայի հորափորման գրուպաների կազմը։

2․ Հորափորման գրուպաների ամրապնդելու, նրանց ինքնուրույնությունը և պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով՝

ա) Հորափորման գրուպայի տնորինությանը հանձնել լիովին բոլոր այն սարքավորումները, վոր գտնվում են նրա կազմի մեջ մտնող հորերում՝ ստանոկները, ռոտորները, նասոսները, էլեքտրասարքավորումը, կրանբլոկները, կալախաննիչները, Սկվարցովի և Շահնազարովի ավտոմատները, չափող պրիբորները և գործիքները (բացի դուրբերից, հորափորման խողովակներից և վորսող գործիքներից, վորոնցից հորափորման գրուպան օգտվում է վարձով), ավերշոտները և սարքավորման ու նյութերի անհրաժեշտ պաշարները։

բ) Հորափորման յուրաքանչյուր գրուպա ունի տեխնիկական մատակարարման իր հարթակը, վորը սարքավորման և նյութեղենի անհրաժեշտ պաշարի հետ միասին լիովին գտնվում է նրա իրավասության տակ։

գ) Կենտրոնական մեքենական արհեստանոցներից հեռու գտնվող հորափորման գրուպաներն ունեն իրենց վոչ մեծ, շարժական մեքենական արհեստանոցները՝ ընթացիկ մանր և ավարիական աշխատանքները կատարելու համար։



դ) Հորափորման գրուպաներին հատուկապես ամրացնել նրանց սպասարկող ամբողջ տրանսպորտը, նույնպես և հանրակացարաններ ու բնակարաններ նույն հիմունքներով, ինչ վոր շահագործման գրուպաներին։

յե) Հորափորման գրուպան փոխանցվում է տնտեսհաշվարկի, ունենում է հանքի վարչության կողմից հաստատված շրջանառական միջոցներ և ֆինանսավորվում է շահագործման գրուպաների միջոցով, կամ հանքի վարչությունից անմիջականորեն (յեթե աշխատում է հետախուզական հորերում) պայմանագրերի համաձայն հորերի փորման կատարած աշխատանքի համար։

զ) Հորափորման գրուպայի վարիչը յերկրաբանական բյուրոյի և շահագործման այն գրուպայի վարիչի հետ միասին, վորի տերիտորիայում տեղի յե ունենում հորափորումը, մշակում է հորերի փորման տեխնիկական պլանը։

է) Հորափորման ստանոկի դրության և հանձնման համար հորափոր վարպետի և մոնտաժային բրիգադի պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով սահմանել այնպիսի կարգ, վորի ժամանակ խմբակի մեխանիկը և մոնտաժային բրիգադը հորափորման ստանոկը գործի ընթացքում տեխնիկապես ստուգելուց և փորձելուց հետո հանձնում են հորափոր վարպետին համապատասխան ակտով։ Տվյալ նավթահորում փորելն ավարտելուց հետո հորափոր վարպետը

հանձնում է հորափոր մեխանիկին և մոնտաժային բրիգադին հորափորման սարքի տեխնիկական ստուգման համապատասխան ակտով:

Տվյալ նավթահորի աշխատանքի ամբողջ ժամանակաընթացքում հորափոր վարպետը լիակատար պատասխանատվություն է կրում հորափորման սարքի աշխատանքի պահպանության և վերանորոգման համար:

ը) Ավարիաները կանխելու նպատակով սահմանել այնպիսի կարգ, վորպեսզի սարքն ու նասոսը նոր նավթահորում հաստատելիս ուշադիր տեխնիկական ստուգման, պլանային — նախազգուշական նորոգման ու տեխնիկական փորձի յենթարկվեն:

թ) Սահմանել այնպիսի կարգ, ըստ վորի հորափորման սարքը նավթահորը շահագործման տալուց հետո չի կարող պահվել վոչ ավել քան հինգ որ: Սարքի պահելն այդ ժամկետից դուրս թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում և միայն հանքի դիրեկտորի կողմից ու յեթե մինչև իսկ թույլ է տրված այդ ժամկետից դուրս սարքի պահման համար, շահագործման գրուպան տուգանք է վճարում:

ժ) Վիշկաների կառուցումը կատարվում է հանքի շինարարական գրասենյակի կողմից անտեսհաշվարկի հիման վրա, հորափորման խմբակի հետ կնքած պայմանագրի համաձայն: Կառուցված վիշկան շինարարական գրասենյակից ընդունվում է համապատասխան ակտով:



ժա) Նախկին հորափորման ցեխի արհեստանոցները, գոլոտային գոտման տնտեսությունը, կավի գործարանները, Նախկին Որսնարի նյութեղենի — գործիքների պահեստը գտնվում են հանքերի հորափորման գլխավոր ինժեների իրավասության տակ, վորը պայմանագրերով կատարում է հորափորական գրուպայի պլանային և ավարիական պատվերները:

ժբ) Վերացնել վինջային ինժեներների ինստիտուտը, վորպես ավելորդ օղակ՝ խմբակի և նավթահորի միջև, ինժեներներին փոխադրելով վճռական նավթահորերը, այդտեղ անմիջականորեն աշխատելու համար:

1. Հորափորման գրուպայի համար հաստատել հետևյալ օրինակելի կառուցվածքը·

ա. Գրուպայի վարիչ·

բ. Գրուպայի վարիչի տեղակալ·

գ. Յերկու հերթափոխ ոգնական·

դ. Ինժեներ և տեխնիկներ՝ հսկողության ու նորոգման համար·

յե. Մեխանիկներ նորոգման մոնտաժային բրիգադներով·

զ. Տեխ — մատակարարման հարթակ·

է. Տրանսպորտ·

ը. Պլանային — ֆինանսական հաշվառքի և տեխնիկական ապարատ (6—9 հոգուց)·

թ. Շարժական մեխանիկական արհեստանոց (հորափորման հեռավոր խմբակների համար):

Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բաղկոմին և Ադնեֆթին, հանքերի դիրեկտորների և կուսակ

ցության շրջկոմների հետ միասին սահմանել ամեն մի հորափորական գրուպայի, յուրաքանչյուր հանքի ճիշտ կառուցվածքն ու անձնակազմըն առանձին — առանձին հորափորման աշխատանքների ծավալի և պայմանների համեմատ: Հանձնարարել Այնեվթին, հանքերի դիրեկտորների և կուսակցության շրջկոմների հետ միասին, վերանայել հորափորման գրուպաների վարիչների կազմը և միջոցներ ձեռնարկել գրուպաների վարչության համար ընտրելու ամուր և վորակյալ աշխատողներ:

V

## ՀՈՐԱՓՈՐ ՎԱՐՊԵՏԻ ՄԱՍԻՆ

1. Նավթահորը հորափորման սիստեմում ստորին արտադրական տնտեսհաշվարկային կազմակերպություն է: Հորափոր վարպետը նավթահորի միանձնյա ղեկավարն է հանդիսանում: Հորափոր վարպետը նավթահորում յեղած ամբողջ սարքավորումների տերն է և պատասխանատվություն է կրում նրանց վիճակի, պահպանման և օգտագործման համար, նավթահորի արդֆինպլանի քանակական և վորակական ցուցանիշները կատարելու համար:

2. Հանձնարարել Այնեվթին՝ Ադրկոմկուսի (բ) Բադկոմի հետ միասին հատուկ մանրամասն կանոններ մշակել հորափոր վարպետի մասին, դրա մեջ նախատեսնելով այնպիսի կարգ, ըստ վորի հորափոր վարպետը պարտավոր է ան



ձամբ ներկա լինել նավթահորում յուրաքանչյուր հերթափոխության ժամանակ և տեխնիկական ցուցմունքներ տալ աշխատանքի անցնող հերթին:

3. Հորափոր վարպետին հանքին և նավթահորին մոտեցնելու նպատակով հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բադկոմին և Այնեվթին, Բադխորհրդի և Նավթայինների Ադրկոմիտեյի հետ միասին յերկու տասնօրյակի ընթացքում պարզել, թե քանի հորափոր վարպետ աշխատանքի տեղից հեռու ռայոններում է ապրում և վորոշել թե նրանցից վորին կարելի յե փոխադրել իրենց ռայոնում ապրելու և անհրաժեշտ միջոցառումներ կատարել հորափոր վարպետներին իրենց աշխատանքի վայրում համապատասխան բնակարաններով ապահովելու համար:

4. Նավթահորում մշակման տեխնիկական վերահսկողություն ապահովելու համար վորպես փորձ Ստալինի, Լենինի և Որջոնիկիձեյի անվան հանքերում յերկու նավթահորերի ամրացնել յերկու հորափոր վարպետ, նրանցից մեկին նշանակելով վարպետ, իսկ մյուսին — նրա ոգնական: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բադկոմին և Այնեվթին իրենց առանձին հսկողության տակ առնել այս միջոցառման անցկացումը:

5. Սահմանել այնպիսի կարգ, ըստ վորի հորափոր վարպետին լիակատար իրավունք է տրվում կատարելու հորափորների և հորափոր-

ման ամբողջ խմբի կազմի ընտրությունը: Հորափորներին մի կարգից մյուս կարգը փոխադրել միայն հորափոր վարպետի միջոցով: Վորպես կանոն սահմանել, վոր հորափոր վարպետների կարգն են փոխադրվում միայն բարձր վորակ ունեցող հորափորները:

6. Մատնանշելով առանձին նավթահանքերում յեղած մի շարք փաստեր՝ յերբ հորափոր վարպետները հորափորներից ավելի ցածր աշխատավարձ են ստանում, վորը չի խթանում հորափորների վորակի բարձրացմանը՝ հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բաքկոմին, Ազնեֆթի և Նավթայինների Ադրկոմիտեյի հետ միասին ստուգել բոլոր նավթահանքերում՝ թե ինչպես է կատարվում Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի վորոշումը և Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի հրամանը — հորափոր վարպետների աշխատավարձի մասին:

7. Հանձնարարել Ազնեֆթի կառավարիչին (ընկ. Պետերսոնին), Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին (ընկ. Գուլբիս) և Նավթայինների միության Ադրկոմիտեյի (ընկ. Մաշկևիչ) հետ միասին միջոցառումներ մշակել հորափոր վարպետների և նավթահորերում աշխատող ինժեներա-տեխնիկական անձնակազմի վորակը բարձրացնելու համար:

## VI

1. Բոլորովին անթույլատրելի համարելով այն դրությունը, յերբ Ազնեֆթի հանքերում հորափորման և շահագործման գրուպաները մինչեվ հիմա չունեն իրենց համար հաստատված 1934 թ. տարեկան արդֆինպլանները, պարտավորեցնել Ազնեֆթին և հանքերի վարչություններին յերկու տասնօրյակի ընթացքում մշակել և գրուպաներին ու բանվորական մասսաներին հասցնել շահագործման և հորափորման գրուպայի տարեկան արդֆինպլանը:

2. Մատնանշելով գիշերային թույլ ինժեներական – տեխնիկական ղեկավարությունն արտադրության վրա, հանձնարարել նավթահանքերի վարչություններին և կուսակցության շրջկոմներին վերանայել ցերեկվա և գիշերվա հերթափոխությունների աշխատողների դասավորությունն այն հաշվով, վորպեսզի գիշերային հերթափոխություններին լինեն ավելի վորակյալ և ստուգված աշխատողներ:

3. Մատնանշելով ինժեներա – տեխնիկական աշխատողների վոչ համաչափ բաշխումը հանքերի և գրուպաների միջև՝ պարտավորեցնել Ազնեֆթին արտադրություն փոխադրվող մասնագետներից առաջին հերթին համալրել Միկոյանի, Ազիզբեկովի, Արտյոմի կղզու և Կիրովի հանքերի ինժեներա – տեխնիկական կադրերը: Հանքերի կառավարիչներին և կուսակցության շրջկոմներին՝ վերանայել ինժեներա – տեխնիկական աշխատողների բաշխումը գրուպաների միջև, մասնագետներին ամրացնելով շահագործման և հորափորման վճռական գրուպաներին:

4. Բոլորովին անբավարարի համարելով այն ընդհատումները, որ տեղի յեն ունենում նավթահորերը կավով վատ մատակարարելու հետեվանքով, պարտավորեցնել Ադնեֆթին յերկուամսյա ընթացքում բոլոր հանքերում կավի գործարաններ սարքավորել, վորոնք լիովին պիտի բավարարեն հանքի կավի պահանջը և կարգավորել կավի փոխադրության գործը հանքերում: Հանձնարարել Ադնեֆթին ընդլայնել կավատար խողովակների ցանցն Ստալինի անվան նավթահանքում բոլոր փորվող նավթահորերն ընդգրկելու համար. միաժամանակ Ստալինյան նավթահանքում կավի լուծույթի մաքրման ռեգեներացիոն սարքավորում կառուցել: Ամենախիստ տեխնիկական հսկողություն սահմանել կավալուծույթի վորակի վրա և անմիջապես անցնել Զըխում կավահանքեր մշակելու աշխատանքին:

5. Ամբարձակների պակասությունը վերացնելու համար պարտավորեցնել Ադնեֆթին բոլոր հանքերից հավաքել խոտանած ամբարձակները և կապիտալ վերանորոգման յենթարկել այդպիսիք: Հանքերում արագացնել ամբարձակների նորոգման ավարտումը:

Բոլորովին անթույլատրելի համարել, յերբ 1932 թվին հնարած շարժական ելեքտրոամբարձակներից մինչև հիմա չի արտադրվում և չի գործադրվում: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բաղկոմին ստուգել ելեքտրոամբարձակների ար-



տադրության ձգձգման պատճառները: Ադնեֆթին անհապաղ կազմակերպել դրանց արտադրությունը:

6. Մատնանշելով, վոր առանձին ագրեգատներին անհրաժեշտ պահեստային մասերի բացակայությունը յերկարատև անարտադրական պարապուրդներ է առաջացնում, պարտավորեցնել Ադնեֆթին յերեք ամսվա ընթացքում ստեղծել այնպիսի դրություն, վորպեսզի հորափորման, շահագործման, կոմպրեսորային տնտեսության, ելեքտրոտնտեսության և տրանսպորտի հիմնական ագրեգատներն անհրաժեշտ պահեստային մասերի մինիմում ունենան: Անհապաղ կազմակերպել պահեստային մասերի արտադրությունն Ադնեֆթի գործարաններում:

7. Նավթահորերի ղեկավարության լավագույն կազմակերպման նպատակով անհրաժեշտ համարել յերկու ամսվա ընթացքում հեռախոսային ցանց անցկացնել բոլոր նավթահորերը. պարտավորեցնել ԱՍԽՀ կապի ժողկոմատին քաղաքային ցանցից Ադնեֆթին 300 հեռախոսային ապարատ տալ: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաղկոմին Ադնեֆթի հետ միասին պղնձի ուտիլի ներքին միջոցների մոբիլիզացիա կատարել՝ արտադրության և նավթահորերում հեռախոսային ցանց անցկացնելու համար:

8. Աշխատանքը նավթահանքերում բարելավելու և ավարիաները կանխելու համար անհր-

րամեշտ համարել ավելի խիստ կարգ սահմանել տեխնիկական հսկողության և սարքավորումների պլանային – նախազգուշական նորոգման նրկատմամբ:

Ադրկոմկուսի (բ) Բադկոմին և Ադնեֆթին— միջոցառումներ մշակել տեխնիկական հսկողության ու նավթահորերի սարքավորման պլանային – նախազգուշական նորոգման կարգն ուժեղացնելու համար:

9. Պարտավորեցնել ԱՍԽՀ Թեթև Արդ. ժող կոմատի լիազորությանը Լենինի անվան գործարանում — Բաղվում կազմակերպել փոկերի արտադրություն, նավթահանքերի կաչալկաների և մխոցների համար:

10. Առաջարկել Ադնեֆթին 1934 թ. ստացվող մարդատար ավտոմեքենաների հերթական խմբերից, վոչ պակաս 80 տոկոս հատկացնել շահագործման և հորափորման աշխատողների և մասնագետների համար: Հանձնարարել Ադնեֆթին և Ադրկոմկուսի (բ) Բադկոմին վերանայել մարդատար ավտոմեքենաների յեղած պարկը նպատակ ունենալով դրանց մի մասը փոխադրելու հորափորման և շահագործման գրուպաները:

11. Կուսակցության և 17-րդ համագումարի վորոշումների համաձայն՝ պարտավորեցնել Ադնեֆթի բոլոր աշխատողներին մինչև 1934 թվի վերջը հանձնել անհրաժեշտ արտադրական -տեխնիկական մինիմումը: Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բադկոմին և Ադնեֆթին սահմանել արտադրական – տեխնիկական մինիմում, վորին պետք է տիրապետի նավթային տնտեսության այս կամ այն տեղամասում աշխատող ղեկավար կամ շարքային աշխատողը:

1934 թվի վերջին Ադնեֆթի բոլոր աշխատողներին անցկացնել ատեստացիոն – վորակյալ հանձնաժողովների միջոցով:

12. Արտադրություն փոխադրվող մասնագետների նյութական դրությունը բարելավելու նպատակով պարտավորեցնել Ադնեֆթին անշեղորեն կատարել կառավարության վորոշումն՝ արտադրություն փոխադրվող մասնագետների աշխատավարձը 10 տոկոսով ավելացնելու մասին: Պարտավորեցնել Ադնեֆթի Բանմատավարչությանըն այնպես կազմակերպել արտադրության մեջ աշխատող մասնագետների սնունդը, ինժեներա-տեխնիկական աշխատողների հանքային ճաշարանների միջոցով, վորպեսզի հանքային ճաշարաններում մասնագետների սնունդը կազմակերպված լինի ավելի քան ապարատում աշխատողներինը: Հատուկ ավտոբուսներ հատկացնել մասնագետներին քաղաքից և բանշեններից արտադրության — աշխատանքի վայրերը — փոխադրելու համար: Բնակարանները բաշխելիս առաջին հերթին բնակարաններ տրամադրել արտադրությունում աշխատող մասնագետներին: Պարտավորեցնել Ադնեֆթին անհապաղ սկսել մասնագետների տների կառուցման (10–15 սենյակից) աշխա-

տանքները Միկոյանի, Մոլոտովի, Ազիզբեկովի, Արտյոմի կղզու, Կաղանովիչի, Կիրովի և Քյուր դախանի հանքերում:

13. Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաքկոմին Ադնեֆթի և նավթայինների միության Ադրկոմիտեյի հետ միասին միջոցառումներ անցկացնել հանքերի տերիտորիաների կուլտուր — սանիտարական դրությունը կարգի բերելու, նավթահանքերի տերիտորիաները կոտրանքներից և անպետք նյութերից մաքրելու, լճերը չորացնելու, արտաքնոցների ցանց կառուցելու, ամեն մի նավթահորի կից աշխատողների համար կուլտուրական տնակ ստեղծելու, հանքային դրասենյակների և հանրակացարանների վերանորոգման, ներկման ու մաքրման ուղղությամբ:

14. Մատնանշելով կուսակցական ուժերի անհամաչափ դասավորումը շահագործման և հորափորման առանձին գրուպաներում (Ստալինյան նավթահանքում № 8 գրուպան ամսեկան հանում է 7000 տոնն նավթ, այնտեղ աշխատում է 69 կոմունիստ, կամ բանվորների կազմի 40 տոկոսը, իսկ № 5 գրուպան հանում է 109 հազար տոնն, և այստեղ աշխատում է 39 կոմունիստ, կամ բանվորների կազմի 15 տոկոսը), պարտավորեցնել կուսակցության շրջանային կոմիտեներին, կուսակցական ուժերը վերադասավորել այնպես, որպեսզի ապահովվի կուսակցական շերտի ավելացումը վճռական գրուպաներում:



15. Հորափորման և շահագործման վճռական գրուպաներում կուսակցական ղեկավար կադրերը ուժեղացնելու նպատակով առաջարկել Ադրկոմկուսի (բ) Բաքկոմին, Բաքկոմի և շրջկոմների բաժինների վարիչներից ընտրել ոչ պակաս հինգ տարվա կուսաշխատանքի ստաժ ունեցողներին և ուղարկել նրանց հորափորման ու շահագործման վճռական գրուպաներն աշխատելու համար որպես կուսկոմների քարտուղարներ:

16. Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաքկոմին մշակել և քննության առնել նավթային արդյունաբերության մեջ գրավված և այժմ ուրիշ պրոֆմիությունների կողմից սպասարկվող շոֆերների, կառուցողների և այլ բանվորների սպասարկումը նավթայինների միությանը հանձնելու հարցը:

Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաքկոմին քննության առնել նավթայինների միության Ադրկոմիտեյի առաջարկությունները նավթայինների միության աշխատանքը 17-րդ կուսհամագումարի որոշումների համաձայն վերակառուցելու վերաբերմամբ:

## VII

## ԱՌԱՋԱՎՈՐ ՏԵԽՆԻԿԱՆ ԱՐՄԱՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմը գտնում է, որ Ադրբեջանի նավթարդյունաբերության ա-

ռաջ դրված խնդիրների կատարումը պահանջում և հետագայում ավելի համարձակ աշխատանք նրա տեխնիկական վերակառուցման գործում: Ռացիոնալիզատորական և գյուտարարական տեխնիկական շարժման մեջ յեղած աճը, այլ և նավթային մեքենաշինարարության նորագույն տեխնիկայի յուրացումը խորհրդային ձեռնարկությունների կողմից, հսկայական հնարավորություններ և ստեղծում նավթային արդյունաբերության հետագա տեխնիկական վերակառուցման համար: Համկոմկուսի (բ) Անդրերկոմն առաջարկում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաղկոմին ու Ադնեֆթին՝

1. Մինչև մայիսի 1-ը սարքավորել Կապելյուշնիկովի ավտոմատիկ կառավարմամբ և դրիյամետրներով վոչ պակաս 25 նավթահոր: Միջոցառումներ մշակել 1934–35 թվին Ադնեֆթի բոլոր հորերին այդ ավտոմատներով զինելու ուղղությամբ:

Մինչև մայիսի 15-ը կազմակերպել վոչ պակաս 32 կոմպլեկտ նոր ֆասոնային դոլոտներ: Ֆասոնային դոլոտների գործադրման ծավալուն աշխատանքի հետ միասին լայն կերպով գործադրել հորափորման մեջ ինժիներ Կուզմինի յեղանակով պատրաստած դոլոտները: Ստալինյան հանքի պինդ շերտերում լիովին անցնել ինժիներ Կուզմինի յեղանակով պատրաստած դոլոտների գործադրմանը:



Ադնեֆթին և Ադրկոմկուսի (բ) Բաղկոմին միջոցառումներ մշակել Կուզմինի դոլոտն Ադնեֆթի մնացած հանքերում հորափորման մեջ գործադրելու համար: Հորափորության մեջ անցնել մինչև 9 մետր ուղլինխտելի ձևին, Սորմովի գործարանի առաջ դնելով նման ուղլինխտելի արտադրությունը յուրացնելու հարցը: 1934 թվի ընթացքում կառուցել և գործադրել հորափորման մեջ վոչ պակաս 50 մետաղե վիշկաներ: Ադրբեջանի նավթարդյունաբերության մեջ լայն կերպով կիրառել բարձր ճնշման գազոլիֆտի ու տրապպը:

1934 թվի ընթացքում Ադնեֆթի յուրաքանչյուր հանքում սարքավորել շահագործական մեկական գրուպա Թումանյանի դիսպետչերյան կառավարությամբ: Անհապաղ կազմակերպել հետեվյալ տեխնիկական առաջարկությունների կիրառումը:

ա) ավտոմատիկ խողովակայունի. բ) արագ փոխվող շառուցերի. գ) կողային գետնափորիչի. դ) հորափորման մետաղյա թեվքերի. յե) սյուներում անցքեր փորելու պրիբոր. զ) ելեքտրոմատորի.

2. Տեխնիկապես փորձել հետեվյալ գյուտերը.

ա) Բազմաստիճան տուրբոբուրի. բ) Քեչեկի ատրենների. գ) ինժիներ Գրոբշտեյնի առաջարկությունները փլցումների դեմ պայքարելու վերաբերմամբ. դ) ինժիներ Կրինսկու առաջար

*կությունը հորերը նոր մեթոդով ամրապնդելու մասին. յե) բանվոր Ստեժեվի սնայդերը. զ) ինժեներներ Գալստյանի և Գասպարովի ավտոմատ տրապը. է) ինժեներ Կուլիկովսկու առաջարկը՝ հորափորման ստանոկը էլեկտրոֆիկացված ղեկավարության անցկացնելու մասին.*

*3. Կազմակերպել հետեվյալ տեխնիկական պրոբլեմների մշակումն ու լուծումը.*

*ա) Կոմպրեսորային շահագործման ռացիոնալացումը (նոր տիպի կոմպրեսորի ավտոմատ հաշվիչ և այլն). բ) նավթի դիմուլսացիան. գ) փակ փորման. դ) կավալուծույթի ռեգիներացիան. յե) նավթի տեղափոխման և պահպանման ռացիոնալացումը. զ) նաթի չափման համար հաշվիչի նախագծումն ու արտադրությունը:*

* * *

Ազնեվթն ու Բազկոմի կուսակցական կազմակերպությունը հաղթահարելով կոնսերվատիզմի տարրերը պետք է ավելի վճռականորեն առաջ մղեն Ադրբեջանի նավթային արդյունաբերության հետագա տեխնիկական վերակառուցումը:

Համկոմկուսի (բ) Յերկրային Կոմիտեն կոչ է անում Բագվի կուսկազմակերպության կոմունիստներին, բոլոր բանվորներին, ինժիներներին ու նավթագործ տեխնիկներին Անդրյերկոմի ներկա վորոշման հիման վրա վերակառուցելով Ազնեվթի աշխատանքը, հանքերում լավ կազմա-



կերպել աշխատանքը և անմիջապես բարձրացնել նավթահանումը՝ նավթահանման պլանն անպայմանորեն կատարելու համար:

1934 թվի առաջին յեռամսյակի ընթացքում Ազնեվթը յերկրին պարտք է մնացել 740 հազար տոնն նավթ: Յերկրորդ յեռամսյակի առաջին որերին նավթահանման որական պլանը նույնպես չի կատարվում: Առաջին յեռամսյակի պարտքը վերացնելու փոխարեն, յերկրորդ յեռամսյակում նորից չի տրվում հազարավոր տոնն նավթ:

Ժամանակն է վերջապես վերջ տալ հետ մնալուն: Արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու տրանսպորտը, ամբողջ յերկիրը Ազնեվթից պահանջում են վերացնել առաջին յեռամսյակում գոյացած պարտքը: 1934 թվին տալ յերկրին 22 միլիոն տոնն նավթ — դա բանվորների, ինժիներների և տեխնիկ նավթագործների ու Անդրկովկասի բոլոր բոլշեվիկների պատվո գործն է:

Նավթը պետք է տրվի և կտրվի:

Անդրկովկասի բոլշեվիկներն ու Բագվի նավթագործները չեն խաբի խորհուրդների յերկրին:

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՈՄ

# ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ԱԶՆԵՎԹԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿ. ԲԵՐԻԱՅԻ ԱՐԱԾ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՌԹԻՎ.

*Համկոմկուսի (բ) Անդրյերկոմը մայիսի 21-ին լսեց ընկեր Բերիայի հաղորդումը՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի Ազնեվթի վերաբերյալ վորոշման մասին։*

*Անդրյերկոմը հաստատեց Ազնեվթի ներկայացրած հունիս ամսի նավթահանման հետևյալ պլանը՝ ըստ առանձին հանքերի.*

| | ամսեկան | միջին որական |
|---|---|---|
| Լենինի անվան հանք | 309,000 | 10,300 |
| Օրջոնիկիձեյի անվ. հ. | 366,000 | 12,200 |
| Ազիզբեկովի անվ. հ. | 309,000 | 10,300 |
| Կագանովիչի անվ. հ. | 156,000 | 5,200 |
| Ստալինի անվ. հանք | 367,500 | 12,250 |
| Կիրովի անվ. հանք | 39,000 | 1,300 |
| Միկոյանի անվ. հանք | 135,000 | 4,500 |
| Մոլոտովի անվ. հանք | 48,000 | 1,600 |
| Արտյոմի կղզի | 60,000 | 2,000 |
| «26»-ի անվան հանք | 2,500 | 83 |
| Ընդամենը | 1,792,000 | 59,733 |



*Համկոմկուսի (բ) Անդրյերկոմը պարտավորեցրեց Ազնեվթին փորվող հանքահորերից մինչև մայիսի վերջը շահագործման մեջ դնել 48 հոր և հունիսի ընթացքում — 90 հոր։ Ազնեվթի կառավարիչ ընկ.* Պետերսոնին *առաջարկվեց՝ ամենաուշը մինչև մայիսի 26-ը ներկայացնել Անդրյերկոմին ի հաստատություն հունիսին փորվելիք հորերի պլանը՝ ըստ նավթահորերի։*

*Նկատի ունենալով Միկոյանի անվ. հանքի խիստ հետ մնալը հանույթի ասպարեզում, առաջարկվել է Ազնեվթի կառավարիչ ընկ.* Պետերսոնին՝ *Ազնեվթի կառավարչի տեղակալներից մեկին ամրացնել Միկոյանի անվան հանքին, ապահովելով հանքի լավագույն տեխնիկական մասնագետների և նրա հետագա մշակմանն առանձին ուշադիր տեխնիկական ղեկավարությունը՝ այն հաշվով, վոր ամենակարճ ժամկետում կատարվի հանքի պլանը։*

*Մատնանշելով, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից հավանություն գտած՝ Անդրյերկոմի ապրիլի 10-ի վորոշման հիման վրա կատարվող Ազնեվթի վերակառուցումն առանձին ողակներում դանդաղ է ընթանում, Անդրյերկոմը հանձնարարել է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաքվի Կոմիտեյին՝ կազմակերպել Անդրյերկոմի վորոշումը կատարելու ընթացքի ստուգումը և վերջացնել Ազնեվթի վերակառուցումը Համկոմկուսի (բ) Կենտկոմի սահմանած ժամկե-*

տում: Առաջարկել է Ազնեֆթի կառավարիչ ընկ. Պետերսոնին՝ սահմանել Ազնեֆթի կենտրոնական ապարատի առանձին ղեկավար աշխատակիցների միջև ֆունկցիաների վորոշակի բաշխում, բարձրացնելով նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվությունը հանձնարարված գործի համար:

Նշելով, վոր Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը և Բաղկոմը չեն կատարել Անդրյերկոմի վորոշումը՝ վորի համաձայն ղեկավար կուսաշխատակիցներ պետք է ուղարկվեյին գրուպաները վորպես կուսկազմակերպիչներ և կուսկոմիտեների քարտուղարներ (30-ի փոխարեն ուղարկված են 18 հոգի) Անդրյերկոմը հանձնարարել է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաղկոմին հինգ օրում ղեկավար կուսակցական աշխատակիցների ընտրություն կատարել գրուպաներն աշխատանքի ուղարկելու համար և ուղարկվածների անձնական ցուցակ ներկայացնել Անդրյերկոմին ի քննություն:

Հանձնարարվել է Ազնեֆթին մի ամսյա ժամկետում ներկայացնել Անդրյերկոմին իր առաջարկությունները՝ Ազնեֆթի համար անհրաժեշտ սարքավորման նոր տիպերի մասին, ինչպես յեվ Ազնեֆթի գերատեսչության տակ գտնվող նավթային մեքենաշինարարական գործարանների արտադրական կարողություն ընդլայնելու վերաբերյալ միջոցառումները:



Առաջարկվել է Ազնեֆթին վերանայել հանքերում գոյություն ունեցող պարկի յուրաքանչյուր կոմպրեսորի օգտագործման ռացիոնալությունը և նշել նրանց արտադրական կարողությունն ավելացնելու միջոցառումներ ներկայացնելով առաջարկություններն Անդրյերկոմին ի քննություն:

Անդրյերկոմի մոտակա բյուրոյում ծրագրված է լսել Ազնավթգործարանների տրեստի հաղորդումը՝ տրուբչատկաների, կրեկինգների և յուղաղտիչ գործարանների չորրորդ սեկցիայի կառուցումների ընթացքի մասին:

Հանձնարարվել է Ազնեֆթի կառավարչին, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաղկոմին՝ կա ամենօրյա հսկողություն սահմանել Ազնեֆթի համար Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշմամբ և Ծանր արդյունաբերության ժողկոմի հրամանով առանձնացված սարքավորումների բեռնաթափման ընթացքի և ստացվող սարքավորման վորակի վրա:

Անդրյերկոմը նշել է՝ վոր, գրուպաներն ամրապնդելու և նրանց տնտեսհաշվի անցկացնելու մասին Անդրյերկոմի կարևորագույն դիրեկտիվը անբավարար է կատարվում: Չնայած Ադրկոմկուսի (բ) Բաղկոմի մայիսի 9-ի վորոշմանը, խմբերը տնտեսհաշվի փոխադրելու աշխատանքը դանդաղ է ընթանում և Բաղկոմի վորոշման մեջ նշված թերությունները դեռևս վերացված չեն:

Հանքերում դեռ այնպիսի տնտեսավարներ կան, վորոնք չեն հասկանում այդ ձեռնարկման տնտեսա — քաղաքական նշանակությունը և ձգձգում են գրուպաների ամրապնդումը: Մյուս կողմից՝ գրուպաների վարիչներից շատերը թերագնահատում են այն հանգամանքը, վոր գրուպաների ամրապնդումն ու նրանց տնտեսհաշվի անցկացնելը ամենից առաջ պահանջում են փոխել ու բարելավել գրուպայի տնտեսական — տեխնիկական ղեկավարման մեթոդները՝ արտադրության ամեն մի ստորին ողակի նկատմամբ և գրուպաների տնտեսական ինքնուրույնության բարձրացումը նրանց վրա լիակատար պատասխանատվություն է դնում գրուպայի պլանը կատարելու համար:

Հանձնարարվել է Ազնեֆթին (ընկ. Պետերսոն), Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի հետ միասին հրավիրել չարհագործման և հորափորման գրուպաների վարիչների խորհրդակցություն՝ գրուպաների աշխատանքի վերակառուցման հարցերի և նավթահանման ու հորափորման պլանի կատարման վերաբերյալ.

Անդրյերկոմը գտնում է, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմի՝ Ազնեֆթի աշխատանքի մասին կայացրած վորոշման և Անդրյերկոմի՝ Ազնեֆթի աշխատանքների վերակառուցման մասին կայացրած վորոշման կատարումը պահանջում է սահմանել հանքերում ամենախիստ կուսակցական և տնտեսական կարգապահություն և դրա



հիման վրա ամրացնել միանձնավարությունը: Անդրյերկոմը հանձնարարել է Ադրկոմկուսի (բ) Բագկոմին և Ազնեֆթին՝ ամենախիստ պատասխանատվության յենթարկել այն աշխատակիցներին, վորոնք խախտում են կուսակցական և տնտեսական կարգապահությունն, անուշադիր են վերաբերվում կուսակցական մարմինների առանձին դիրեկտիվներին և Ազնեֆթի ձեռնարկությունների տնտեսական ղեկավարների կարգադրություններին:

Անդրյերկոմը նշեց, վոր հանքերում դեռևս կուս-մասսայական աշխատանքներն զգալի չափով հետ են մնում նավթի համար մղվող պայքարում՝ Բաքվի կուսակցական կազմակերպության առաջ կանգնած խնդիրներից:

Կուսակցական կազմակերպությունների աշխատանքի վերակառուցման մասին 17-րդ համագումարի վորոշումները դեռ շատ հեռու յեն իրագործվելուց: Կուսակցական աշխատանքի պրակտիկայում մինչև այժմ գոյություն ունեն գործամոլության տարրեր, թույլ է ծավալվում մասսաների քաղաքական դաստիարակությունը, կուսկազմակերպությունների առանձին ողակներում անբավարար է զգոնությունը, բանվորների առանձին խավերի հետ չերտավորված աշխատանք չի տարվում: Կոմունիստների զգալի խմբեր արտադրության մեջ դեռ իսկական ավանգարդային դեր չեն խաղում: Առանձին կոմունիստներ, կատարելով և գերակատարելով նրանց տրված ար-

տադրական առաջադրությունները, իրենց շրջապատող անկուսակցական բանվորական մասսաներին սոցմրցման հիման վրա՝ իրենց հետեվից տանող կազմակերպիչներ չեն հանդիսանում: Այդ բոլորը կարող էր տեղի ունենալ մի միայն շնորհիվ այն հանգամանքի, վոր շրջանային կոմիտեները թույլ են վերակառուցել իրենց աշխատանքը և նրանց կողմից կուսկազմակերպությունների ստորին ողակներին անբավարար կենդանի և կոնկրետ ղեկավարություն է ցույց տրվում:

Անդրյերկոմը մատնանշում է՝ վոր բանվորներն ու ինժիներա – տեխնիկական աշխատողները տեխնիկական ուսուցման գործում անբավարար են ընդգրկված և յերբեմն տեխուսուցումն արտադրության կոնկրետ խնդիրներից անջատվում է:

Անդրյերկոմը պարտավորեցրեց Կենտկոմին Բագկոմին և կուսակցական շրջկոմներին՝ անհապաղ միջոցներ ձեռք առնել՝ կուս-մասսայական աշխատանքի և տեխնիկական ուսուցման դրվածքն արտադրության մեջ ծավալելու և բարելավելու համար: Անդրյերկոմը պարտավորեցրեց Բագվի Կոմիտեյին՝ ընդհանրացնել առանձին շրջաններում յեղած կուսաշխատանքների դրվածքի դրական փորձը և լայն կերպով տարածել այն ամբողջ կուսակցական կազմակերպության մեջ:



Անդրյերկոմը գտնում է, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումը Ազնեֆթի մասին մեծագույն պատասխանատվություն է դնում Բագվի բոլշևիկների և նավթագործների, Անդրկովկասի բոլոր կոմունիստների վրա՝ 1934 թվի նավթահանման պլանը կատարելու գործում: Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը և Բագկոմը պետք է այնպես կազմակերպեն պայքարը Համկոմկուսի (բ) Կենտկոմի այդ վորոշումը կատարելու համար, վոր նա հասցվի յուրաքանչյուր կոմունիստի, կոմյերիտականի, մասնագետի և բանվորի, բարձրացվի և ավելի լավ կազմակերպվի Բագվի բոլոր բոլշևիկների և նավթագործ բանվորների ակտիվությունը՝ Ազնեֆթի աշխատանքը լավացնելու կոնկրետ միջոցառումների շուրջը և խիստ հսկողություն սահմանվի Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշման յուրաքանչյուր կետի կատարման համար:

---

# ԸՆԿ. ԲԵՐԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ

## ԱԶՆԵՎԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Անդրկոմկուսի (բ) կենտկոմի ու Բագկոմի

քարտուղար՝ ընկ. ԲԱԳԻՐՈՎԻՆ

Ազնեվթի կառավարիչ՝ ընկ. ՊԵՏԵՐՍՈՆԻՆ

Ռայկոմների և կուսկոմների քարտուղարներ ընկ. ընկ. ՆԱՐԻՄԱՆՈՎԻՆ, ԱԿՈՊՈՎԻՆ, ԱԽՈՒՆԴ-ԶԱԴԵՅԻՆ, ԳՈՒՐԵՎԻՉԻՆ, ԲՈՆԴԱՐԵՆԿՈՒՆ, ՇԱՀԲԱԶՈՎԻՆ, ՎԱՐՈՒՆՑԻՆ, ԼԻՄԱՐԻՆ ՅԵՎ ԴՈՆՍԿՈՅԻՆ.

Հանքերի վարիչներ ընկ. ընկ. ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ՄԱԽՆՈՅԻՆ, ԿՐԻԼՈՎԻՆ, ԿՈՒԶՄԻՆԻՆ, ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ԳԵՅՄԱՆԻՆ, ՍԱԼՄԱՆՈՎԻՆ, ՀԵՅԴԱՐՈՎԻՆ ՅԵՎ ԿԱՄԼԱՋԵՅԻՆ:

Թանկագին ընկերներ

*Անդրյերկոմի բյուրոյի ապրիլի 3-ի նիստում վորոշում է ընդունվել Ազնեվթի աշխատանքների վերակառուցման մասին:* Այդ վորոշման կատարումը Անդրկոմկուսի (բ) կենտրոնական և Բաքվի կոմիտեներից, Ազնեվթի ղեկավարու-



թյունից և Բաքվի վողջ կուսակցական կազմակերպությունից մեծ լարված աշխատանք է պահանջում: *Պետք է այնպես անել, վոր այդ վորոշման ամեն մի կետը կատարվի խնամքով, ճիշտ և մինչև վերջը:*

*Հավանական է, վոր կգտնվեն պահպանողական տարրեր, վորոնք ամեն կերպ, խոչընդոտ կհանդիսանան Ազնեֆթի աշխատանքի վերակառուցման համար նշված միջոցառումներին. սաբոտաժի կենթարկեն Ցեկկոմի վորոշումը:*

*Կենտրոնական և Բաքվի կոմիտեները, վողջ կուսակցական կազմակերպությունը պետք է* վճռականապես բանան սաբոտաժի և կոնսերվատիզմի յերևույթները ու անխնա հարվածեն նրանց:

*Անդրյերկոմի վորոշման հիմնական իմաստը կայանում է նրանում, վոր ավելի լավ կազմակերպվի Ազնեֆթի կենտրոնական ապարատի աշխատանքը, նրա ղեկավարությունը յուրաքանչյուր հանքի նկատմամբ, ճիշտ կառուցվի հանքային վարչությունը, իրապես ամրացվեն շահագործման և հորատման գրուպաները, նյութական տեխնիկական պայմանների, հնարավորության սահմաններում նրանք դարձվեն լիարյուն տնտեսական ողակներ:*

*Ընդունած վորոշման իմաստն այնուհետև կայանում է նրանում, վոր համարձակ կերպով մասնագետների զգալի խմբեր տեղափոխվեն Ազնեֆթի կենտրոնական և հանքային ապարատներից անմիջապես գրուպա, արտադրություն,*

ստեղծելով նրանց աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ, բարձրացնել հորափորման վարպետի դերն ու պատասխանատվությունը, դարձնել նրան հորի իսկական տերը, մոտեցնել նրան աշխատանքի վայրին։

Վորոշման մեջ Ադնեֆթի առանձին տնտեսական հարցերի մասին նշված են միջոցառումներ՝ հանքերը կավով ապահովելու, գիշերային հերթի ղեկավարության ուժեղացման, ելեքտրո-ամբարձակների արտադրության, կուսակցական ուժերի ավելի ճիշտ դասավորման, և, վերջապես, առաջավոր տեխնիկան Ադրբեջանի նավթարդյունաբերության մեջ ավելի համարձակ կերպով արմատացնելու համար։

Նրանից թե վո՛րքան արագ և ճիշտ կիրագործենք մենք այդ միջոցառումները, դրանից էլ կախված կլինի 1934 թվին 22 միլիոն տոնն հանույթի պլանի հաջող կատարումը։

Հանքերի վարչությունների և շահագործման ու հորափորման խմբերի կառուցվածքի փոփոխման համապատասխան, ԲԿ և Ադնեֆթն այդ վորոշման հիման վրա պետք է ընտրեն և դասավորեն կադրերը։ Դա խոշոր խնդիր է։ Կադրերի լավ և հմուտ ընտրությունը վճռում է գործի հաջողությունը։ Դրանով զբաղվեցեք առանձին ուշադրությամբ ու խնամքով։

Անհրաժեշտ է այնպես անել, վոր Ադնեֆթի յուրաքանչյուր աշխատակից, Բաքվի ամեն մի բոլշևիկ հասկանա ու զգա կուսակցության Ցենտ



րալ Կոմիտեի այդ փաստաթղթի կատարման պատասխանատվությունը և կայուն կերպով պայքարի նրա կատարման համար։ Պետք է վողջ կազմակերպությունը կազմ ու պատրաստ դրության մեջ դնել, բարձրացնել յուրաքանչյուր բանվորի և մասնագետի ակտիվությունը։

Պետք է լավ կազմակերպել վորոշման յուրաքանչյուր կետի կատարման վերահսկումը։ Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքվի Կոմիտեի քարտուղարները, Ադնեֆթի կառավարիչը և կառավարչի տեղակալները, շրջկոմիտեների քարտուղարները յուրաքանչյուրն իր գծով պետք է անձամբ ստուգեն Անդրյերկոմի վորոշման կատարումը։

Մեզ անհրաժեշտ է հիշել ընկ. Ստալինի 17-րդ համագումարում արած ցուցմունքը։

«Նրանից հետո, յերբ տված է ճիշտ գիծը, յերբ տված է հարցի ճիշտ լուծումը, գործի հաջողությունը կախված է կազմակերպչական աշխատանքից, կուսակցության գիծը կյանքում կիրառելու պայքարը կազմակերպելուց, մարդկանց ճիշտ ընտրությունից, վերադաս մարմինների վորոշումների կատարման ստուգումից։ Առանց դրա կուսակցության ուղիղ գիծը և ճիշտ վորոշումը կարող է լուրջ վնաս կրել»։

Յելնելով ընկ. Ստալինի այդ ցուցմունքից, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը և ԲԿ, Ադնեֆթը շրջկոմները և հանքերի վարչությունները պետք

34/1935
1243

և ծավալեն համառ պայքար՝ Ադնեֆթի աշխատանքը վերակառուցելու և նավթի հանույթը անհապաղ բարձրացնելու՝ 22 միլիոն տոննի համար:

Անդրկովկասյան Յերկրային Կոմիտեն համոզված է, որ Բաքվի բոլշևիկները, բոլոր բանվորները, ինժեներներն ու տեխնիկները, նավթագործները, համակված մեծագույն պատասխանատվությամբ, որ Խորհուրդների յերկիրը դրել է նրանց վրա նավթահանման գործում, արագ կերպով կվերացնեն առաջին յեռամսյակի պարտքը և հաջող կերպով կկատարեն 1934 թվի նավթահանման պլանը:

---

# ЗА ВЫПОЛНЕНИЕ ПЛАНА НЕФТИ

Издание „КОММУНИСТ“ (арм.)
Баку—1934 г.

ՀՀ Ազգային գրադարան
NL0205806

31382